



Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2014 թ. թիվ 21

ՄԱՅԻՍԻ 1-Ը՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐ

2014 թվականի Աշխատանքի օրը ևս արհմիությունների կյանքում նշանավորվեց մայիամեկյան խաղաղ երթով: Կազմակերպիչը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան էր, մասնակիցները՝ ճյուղային արհմիությունների ոլորտները ներկայացնող աշխատողներ, որոնց զգալի հատվածը պետական հիմնարկներում աշխատողներն էին:

Այս տարի երթն առավել քան երբևէ բազմամարդ էր, լրատվամիջոցների արձագանքն էլ պակաս չէր:

Պետական հիմնարկներում աշխատողների կարգախոսներն էին «Մայիսի 1-ը՝ աշխատանքի օր», «Աշխատավոր մարդուն՝ արժանապատիվ աշխատանք, արժանապատիվ աշխատավարձ», «Համայնքային ծառայողին՝ արժանապատիվ աշխատավարձ», «Ուժեղ արհմիություն, ուժեղ քաղաքացիական հասարակություն», «Արհմիության ուժը միասնության մեջ է, անդամակցեք արհմիություններին» և այլն:

Հարկ ենք համարում նշել, որ երթին մասնակցելու էին եկել Սևանի, Մասիսի, Արագածի, Հրազդանի, Գավառի, Իջևանի, Աշտարակի, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Նաիրիի, Բերդի, Վայքի տարածքներից, Խարբերդի մասնագիտացված մանկատնից, իսկ մայրաքաղաքից մասնակցում էին Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ կառավարության աշխատակազմի «Մպասարկում» ՊՈԱԿ-ի, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության, Երևանի «Զատիկ» մանկատան, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ոստիկանության ոչ ծառայողների, պետական պահպանության վարչության շուրջ 400 աշխատողներ:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ Աշխատանքի օրվան նվիրված միջոցառումները պետհիմնարկների արհմիությունն ամփոփեց իր արհմիութենականների՝ «Մոսկվա» կինոթատրոնում «Փարաջանով» ֆիլմի դիտմամբ:

Աշխատողներին՝ բարեկեցիկ կյանք ապահովող արժանապատիվ աշխատանքի, իսկ արհմիութենական կազմակերպություններին՝ արհմիության անդամների իրավունքների պաշտպանության, սոցիալական երկխոսության մեխանիզմների կիրառման, սոցիալական արդարության հաստատման գործում հաջողության և այլ մատչանքներով հանդես եկավ նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան:

Բացի տարբեր լրատվամիջոցներով երթի լուսաբանումից, ՀԱՄԿ-ի ղեկավարներն այդ օրը մասնակցեցին նաև տարբեր հեռուստահաղորդումների, որոնց հղումները տեղադրված են ՀԱՄԿ-ի և պետհիմնարկների արհմիության պաշտոնական կայքերում (hamk.am, arhmiutyun.org), ինչպես նաև պետհիմնարկների արհմիության ֆեյսբուքյան էջում:

**ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՑԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչվելուց հետո ՃՀՄ նախագահը դիմեց ՀՀ նորանշանակ վարչապետ Հ. Աբրահամյանին՝ առաջարկելով մինչև նոր օրենսդրության մշակումը կոնկրետ քայլեր կատարել աշխատողների իրավունքները չխախտելու ուղղությամբ: Առաջարկությունների մի մասն, ի դեպ, հաշվի է առնվել Ազգային ժողովի կողմից 15.05.2014թ. ընդունված «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքում: Ստեղծված իրավիճակում աշխատողների ստվար գանգվածի դժգոհությունը կանխելու համար Ա. Ասատրյանը վարչապետին առաջարկել է հանդես գալ պաշտոնական պարզաբանմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանի պատասխան գրության մեջ նշվում է, որ նախագծում (արդեն գործող օրենքում – հեղ.) հաշվի են առնվել արհմիության կողմից բարձրացված հարցերը, «մասնավորապես՝ պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակցի՝ գործատուին ներկայացրած դիմումի հիման վրա վերջինս մասնակիցների համար (անունից) կուտակային վճարներ չի հաշվարկում և չի փոխանցում»: Ա. Պետրոսյանը պարզաբանել է նաև, որ վերացվել է գործատուի՝ պարտադիր կուտակային վճար հաշվարկելու և փոխանցելու պատասխանատվությունը, կենսաթոշակային գումարները չեն գանձվի այն աշխատողներից, ովքեր դիմում են գործատուին, պետությունը կատարում է կուտակային վճար կատարելու իր պարտավորությունը՝ անկախ մասնակցի կողմից կուտակային վճար կատարելու հանգամանքից և այլն:

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԻՄ-ԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԻՐԱԶԵԿԿԵՑԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆՆ
ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆՈՐՄԵՐԻՆ**

Սոցիալական գործընկերության շրջանակներում ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանն ու ՀԱՄԿ-ի իրավբանական բաժնի պետ Մ.Փիլիպոսյանը մարտ ամսին հանդիպեցին Արարատի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, պատասխանատու աշխատողների հետ՝ պարզաբանելու ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերը, դրանց կիրառումը գործատու – աշխատող հարաբերություններում և արհմիությունների դերը դրանցում: Հանդիպմանը ներկա էին նաև Արարատի մարզը ներկայացնող Արտաշատի, Մասիսի և Արարատի տարածքային արհմիությունների ղեկավարները: Ճյուղային արհմիության նախագահը ներկայացրեց արհմիության կատարած աշխատանքը: ՃՀՄ նախագահը ներկայացրեց նաև արհմիության դիրքորոշումը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ:

Բանախոսներն սպառիչ պատասխանների արժանացրին օրվա թեմային առնչվող բոլոր հարցադրումներին:

ՀԻՇԵՑՈՒՄ

Կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվետու-ընտրական ժողովներ չանցկացրած անդամ կազմակերպությունների նախագահներին առաջարկում ենք կազմակերպության ղեկավար մարմինների օրինականությունը պահպանելու համար անհապաղ ժողովներ անցկացնել:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության արհմիութենական առօրյային կարող եք ծանոթանալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի www.hamk.am, Հայաստանի պետհիմնարկների արհմիության www.arhmiutyun.org կայքերում և ֆեյսբուքյան էջում (Հայաստանի պետհիմնարկների արհմիություն):

ՄՈՍԿՎԱՅԻ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այս տարվա ապրիլի 11-15-ը ճյուղային հանրապետական արհմիությունը հյուրընկալեց ՌԴ պետական հիմնարկների աշխատողների արհմիության Մոսկվայի արհեստակցական կազմակերպության նախագահության 14 անդամների: Այցելությունն սկսվեց ճյուղային արհմիության գրասենյակում նրանց հյուրընկալությամբ, ուր նրանց սպասվում էր աշխատանքային հանդիպում Հայաստանի ճյուղային արհմիության նախագահության անդամների հետ: 5-օրյա այցի ընթացքում հյուրերը ծանոթացան Հայաստանի պատմամշակութային արժեքներին, տեսարժան վայրերին. իրենց հարգանքի տուրքը մատուցեցին 1915թ. ցեղասպանության զոհերի հիշատակին, հիացան կապուտայա Սևանով, Ծաղկաձորով, տպավորվեցին Գառնու հեթանոսական տաճարով, քարակուռ Գեղարդի վանքով, Մարդարապատի հուշահամալիրով, Էջմիածնի հոգևոր կենտրոնով, հայոց գրերը հավերժացնող Մատենադարանով...

Մեր արհմիութենականներն էլ ծանոթացան մոսկովյան արհմիութենական առօրյային ՌԴ նախագահի աշխատակազմին կից կառույցներում, արտաքին գործերի, էկոնոմիկայի ու առևտրի, կրթություն ու գիտության նախարարություններում և այլ պետական հիմնարկներում:

Այցի ընթացքում հյուրերը փորձի փոխանակման լայն հնարավորություն ունեցան:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐԶ

✓ ՃՀՄ նախագահ, Երևանի ներքաղաքային ուղևորափոխադրումների սակագնի ձևավորման հարցերով հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյանը հանձնաժողովի քննարկմանն է ներկայացրել արհմիության տեսակետը հանձնաժողովի կողմից հաստատված չափորոշիչների փոփոխությունների շուրջ: «Գտնում ենք,- նշվում է հանձնաժողովի նախագահին ուղղված գրության մեջ,- որ մինչև չկատարվեն տրանսպորտի աշխատանքի բարելավման՝ քաղաքացիների համար տեսանելի փոփոխություններ, այն է՝ ժամանում համաձայն չվացուցակի, սանիտարական պատշաճ վիճակ, տոմսերի վաճառքի ընդունելի համակարգ, ուղեվարձի գնի բարձրացումն անթույլատրելի է և չի ընդունվի հասարակության կողմից»:

Սպասենք հանձնաժողովի հաջորդ նիստին:

✓ Այս տարի ճյուղային արհմիությունը համալրվեց ևս երկուսով: ՀՀ ԱՎԾ Սյունիքի և Կոտայքի մարզային գործակալությունների արհեստակցական կազմակերպությունների նախագահներ **Ամայա Բաբաջանյանին**, **Վազգեն Բեգլարյանին**, ինչպես նաև Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության, ՀՀ ԲՄՓ գործակալության և Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների նորընտիր նախագահներ **Ռուզաննա Խաչատրյանին**, **Նելլի Հովակիմյանին** և **Գալուստ Խարբությանին** մաղթում ենք նորանոր ու շոշափելի ձեռքբերումներ արհմիութենական աշխատանքում:

✓ Ամռան առաջին ամսի 7-ին և 8-ին ճյուղային արհմիության անդամ կազմակերպությունների ակտիվն անցկացրեց Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում, որտեղ հանգստի հետ համատեղ անցկացվեց արհմիութենական ուսուցում: Մասնակիցները ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԲՄՓ գործակալության, Աշտարակի տարածքային միության, Աջափնյակ, Շենգավիթ, Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատողների արհմիությունների ղեկավար մարմինների անդամներ էին: 2-օրյա ուսուցումն անցկացրին ու մասնակիցների արհմիութենական հետաքրքրասիրությունը բավարարեցին ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանն ու հաշվապահ Ռ. Օհանջանյանը:

Միջոցառումն անցկացվեց ճյուղային միության միջոցներով:

✓ Ճյուղային հանրապետական միության աշխատակազմը ՀԱՄԿ-ի և մյուս ճյուղայինների հետ համատեղ ապրիլի 24-ին այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակարան, իսկ Մայիսի 9-ին հարգանքի տուրք մատուցեց Հայրենական մեծ պատերազմում հազարավոր հայորդիների կորուստը խորհրդանշող Անհայտ զինվորի շիրիմին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը Ղազախստանի մայրաքաղաք Դուշանբեում մայիսի 28-ին մասնակցեց Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի խորհրդի հերթական նիստին: 12 երկրներ ներկայացնող խորհուրդը քննարկեց ԱՄՖ-ի անցած աշխատանքային տարին: Խորհրդի աշխատանքներին ներկա էր նաև Տաջիկստանի արհմիությունների ֆեդերացիայի նախագահ Մ. Սալիխովը, ով ներկայացրեց իրավիճակը երկրում և արհմիությունների դերը աշխատավորների պաշտպանության գործում: Ավելի մանրամասն պետհիմնարկների ոլորտում աշխատողների շահերի պաշտպանությունը ներկայացրեց Տաջիկստանի պետական հիմնարկների աշխատողների ճյուղային արհմիության նախագահ Դ.Կախարովը: Խորհրդի անդամները իրենց ելույթներում ներկայացրեցին այն խոչընդոտները, որոնց հետ առնչվում են արհմիությունները յուրաքանչյուր երկրում կանոնադրական գործառույթներն իրականացնելիս: Խորհուրդը, լսելով վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Կ.Կուզկինայի և գլխ.հաշվապահ Մ.Չերնովայի հաղորդումները, հաստատեց ԱՄՖ-ի տարեկան հաշվետվությունը: Արհմիության անդամների ավելացման գծով լավագույն անդամ կազմակերպություն ճանաչվեց Ադրբեջանի պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհմիությունը: Խորհրդի նիստից դուրս մասնակիցները ծանոթացան Տաջիկստանի պատմամշակութային ժառանգությանը:

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ճյուղային արհմիության հերթական հանդիպումը արհմիության անդամների հետ «Արենա բոուլինգ» ակումբում էր: Ճյուղային միության տարեկան աշխատանքային պլանով նախատեսված սպորտային միջոցառումների շրջանակներում Երևան քաղաքի 15 անդամ կազմակերպությունների թիմեր բոուլինգի թեժ մրցապայքարում էին (նման ակտիվություն ակնկալում ենք արհմիութենական բոլոր նախաձեռնություններում ևս): Մասնակիցները ներկայացնում էին Երևանի քաղաքապետարանի, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն», ՀՀ ԲՄՓ գործակալությունների, Հայաստանի պատմության թանգարանի, ՀՀ Էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Խարբերդի, «Ձատիկ» մանկատների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ պետական գույքի կառավարման վարչության, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ ոստիկանության, ՀՀ սահմանադրական դատարանի արհմիութենական կազմակերպությունները:

Հաղթողի գավաթին արժանացավ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմը: Երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցնելու համար դիպլոմներ շնորհվեցին համապատասխանաբար Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և Հայաստանի պատմության թանգարանի թիմերին: Գավաթակիր թիմը հնարավորություն ստացավ Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում 1-օրյա անվճար հանգստի, իսկ շենգավիթցիները նույն առողջարանում մեկօրյա հանգիստ կվայելեն 50% զեղչով:

Անհատական հաշվով 1-3 տեղերն զբաղեցնելու համար համապատասխանաբար դիպլոմներ շնորհվեցին Դավիթ Պետրոսյանին՝ Հայաստանի պատմության թանգարանից, Հովհաննես Ղալեչյանին՝ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից և Ալբերտ Բադալյանին՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից: Բոլոր մասնակիցները խրախուսվեցին դիպլոմներով:

«ՊՐՈՖՏՈՒՐ» ընկերությունն առաջարկում է ամառվա մոտալուտ տապը մեղմել Հայաստանի, ԼՂՀ-ի ու արտերկրի զովաշունչ վայրերում: Կոլեկտիվով հանգստանալու դեպքում իրականացնում ենք գնային ճկուն քաղաքականություն (վերաբերվում է ՃՀՄ անդամ կազմակերպություններին): Ընկերության տարաբնույթ ծառայությունները մշտապես թարմացվում են նորաբաց www.proftour.com (www.proftourarmenia.com) կայքում, facebook.com/proftourArmenia կայք էջում, որտեղ էլ կարող եք բավարարել ձեր հետաքրքրասիրությունը զբոսաշրջային ծառայությունների շուրջ և ոչ միայն: Կազմակերպում ենք նաև տպավորիչ հյուրասիրություն՝ ֆուրջեա:

«Պրոֆտուրի» կայացումը ամրապնդում է արհմիության ֆինանսական հենքը:

Շնորհակալ ենք նրանց, ովքեր գիտակցում են սա: